ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ

Դ Ի Մ ՈՒ Մ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության)՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

1. Դիմումը ներկայացնելու իրավական հիմքը.

Դիմումը ներկայացվում է՝ հիմք ընդունելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը:

2. Դիմումի առարկան.

Սույն դիմումով վիճարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության)՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասի և 79-րդ հոդվածների համապատասխանությունն այնքանով, որքանով չի ապահովվում հանցագործության համար մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքի լիարժեք իրացումը պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտի կիրառության շրջանակներում:

3. Դիմումով վիճարկվող իրավական դրույթները.

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը[1] ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի սեպտեմբերի 1-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից (ՀՀՊՏ 1998.09.21/22(55), ՀՕ 248):

ՀՕ-45-Ն օրենքով Օրենսգրքի 69-րդ հոդվածը լրացվել է 5-րդ մասով, որն ընդունվել է 2009 թվականի փետրվարի 5-ին, ուժի մեջ մտել 2009 թվականի մարտի 1-ից (ՀՀՊՏ 2009.02.13/9(675) հոդ.162):

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության) իրավակարգավորումների բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 69. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը

5. Սույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:»:

«Հոդված 70. Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերը

1. Փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են.

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:»:

«Հոդված 72. Պաշտպանից հրաժարվելը

2. (...) Սույն օրենսգրքի 69 հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորություններ:»:

[1] Այսուհետ՝ Օրենսգիրք

4. ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները

«Հոդված 67. Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը

Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

(...)

2) անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք.»

(...):»:

«**Հոդված 79. Որոշակիության սկզբունքը**

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»:

5. Դրույթի կիրառելիության խնդիրները.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը, ինչպես նաև փաստաբան Արմեն Ֆերոյանը գրավոր դիմումներ են հասցեագրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, հայտնելով դիրքորոշում առ այն, որ Օրենսգիրքը բավարար հստակությամբ չի սահմանում պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտը և դրա փոխհարաբերակցությունը մեղադրյալի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով կամ անձամբ պաշտպանվելու ինստիտուտի հետ: Դիմումներում նշվում է նաև, որ Օրենսգիրքը որոշակիորեն և հստակորեն չի կարգավորում, թե որ դեպքում է պարտադիր իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու պետության՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը գերակայում մեղադրյալի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով անձամբ պաշտպանվելու հիմնարար իրավունքին: Ավելին, նշված իրավիճակը կարող է հանգեցնել հանրային ընկալման անճշտության:

Այսպես, ՀՀ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցության պարտադիր դեպքերը, պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և պաշտպանից հրաժարվելը կարգավորվում են Օրենսգրքի մի շարք հոդվածներով: Մասնավորապես՝ Օրենսգրքի

«Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերը» վերտառությամբ 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները քրեական գործով վարույթին որպես պաշտպան մասնակցում են՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա:*

Ավելին, Օրենսգրքի՝ «Պաշտպանի պարտադիր մասնակցությունը» վերտառությամբ 69-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ *նույն հոդվածի առաջին մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում դատարանը չի ընդունում պաշտպանից ամբաստանյալի հրաժարումը և սույն օրենսգրքով սահմանված կարգով նշանակում է պաշտպան կամ պահպանում է նշանակված պաշտպանի լիազորությունները:*

Նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ *քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ՝ դատարանը կիրառում է սույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված սանկցիան:*

Օրենսգրքի՝ *«Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները» վերտառությամբ 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու «նիստերի դահլիճից հեռացնելը» սանկցիան:*

Օրենսգրքի մեկ այլ՝ «Պաշտպանից հրաժարվելը» վերտառությամբ 72-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությամբ սահմանվում է, որ *Օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարվելը*

և նշանակել պաշտպան կամ պահպանել նշանակված պաշտպանի լիազորությունները:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասի 2-5-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերն են՝

- կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր անզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով,

- կասկածյալի կամ մեղադրյալի մոտ առկա է հոգեկան հիվանդություն կամ ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարում,

- կասկածյալը կամ մեղադրյալը չի տիրապետում կամ ոչ բավարար չափով է տիրապետում քրեական դատավարության լեզվին,

- հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է,

- քրեական հետապնդումն իրականացվում է այն անձի նկատմամբ, որին վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարում անմեղսունակության վիճակում:

Օրենքի խնդրո առարկա դրույթների բովանդակային համադրված վերլուծությունից բխում է, որ ստեղծվում է իրավիճակ, երբ հակադրվում են մի կողմից կասկածյալի կամ մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքը, մյուս կողմից՝ դատարանի՝ արդյունավետ իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու (որպես արդար դատական քննության իրավունքի բաղկացուցիչ մաս) պարտականությունը, որի շրջանակներում վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի չընդունել (իսկ սանկցիայի կիրառության դեպքում դատարանը չի ընդունում) պաշտպանից կասկածյալի կամ մեղադրյալի հրաժարումը: Իր հերթին, այս երկուսը հակադրվում են կասկածյալի կամ մեղադրյալի իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքին:

6. Օրենքի նշված դրույթները հակասահմանադրական են հետևյալ հիմնավորումներով.

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը փաստաբանի կողմից պաշտպանի իրավավիճակ ձեռք բերելու միակ պայման է դիտարկում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությունը: Ընդ որում, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման՝ համաձայնությունը պետք է ստացվի հստակորեն, աներկբայորեն և դատավարական երաշխիքների ուղեկցությամբ:[2] Մինչդեռ, երբ դատարանն Օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով առանց ամբաստանյալի համաձայնության հանրային պաշտպանին ներգրավում է որպես ամբաստանյալի պաշտպան՝ այդպիսով կիրառելով պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտը, դրանով ստեղծվում է հակասություն 68-րդ հոդվածի 2-րդ մասի հետ:

Ստացվում է, որ որպես ընդհանուր պայման պաշտպանն իր լիազորությունները ստանձնում է մեղադրյալի համաձայնությամբ, մինչդեռ մեղադրյալի նկատմամբ սանկցիայի կիրառության դեպքում այդ համաձայնության ստացումն էական չէ, քանի որ գործում է վարույթին պարտադիր մասնակցության կանոնը՝ անկախ մեղադրյալի համաձայնության առկայությունից: Հասկանալի է, որ այս իրավիճակը երկու տարբեր ինստիտուտների բախում է, որի փոխհարաբերակցումն օրենսգիրքը պետք է հստակորեն կարգավորի՝ իրավական անորոշությունից խուսափելու համար:

Մինչդեռ, Օրենսգիրքը չի սահմանում, թե որ գերակա շահի կամ իրավունքի առկայության դեպքում է հնարավոր մեղադրյալի՝ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքը ստորադասել պարտադիր իրավաբանական ներկայացուցչություն ապահովելու դատարանի պարտականությանը:

Խնդրի կապակցությամբ կատարվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն: Մասնավորապես մի շարք եվրոպական երկրների քրեական դատավարության օրենսգրքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այդ երկրներում ևս գործում է պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտը՝ որոշակի առանձնահատկություններով: Այսպես,

[2] Տե՛ս Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Panovits v. Cyprus) 2008 թվականի դեկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 4268/04, կետ 68:

որոշ երկրների քրեական դատավարության օրենսգրքերում պաշտպանի պարտադիր մասնակցության հիմքերը սպառիչ ձևով թվարկված են համապատասխան հոդվածներում (օրինակ՝ Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդված[3], Սերբիայի քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդված[4], Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդված[5], Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդված[6], Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդված և այլն): Այս հոդվածներով սահմանվում է պաշտպանի մասնակցության պարտադիր հիմքեր այն դեպքերի համար, երբ օրինակ մեղադրյալն անչափահաս է, նրա նկատմամբ դատարանի կողմից կիրառվել են սանկցիաներ, վերջինիս ունի մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն, չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, կամ եթե այդպիսի նշանակումը բխում է արդարադատության շահից:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունք: Որպես անձի հիմնական իրավունք այս իրավունքը նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի[7] 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով, որի համաձայն՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Այս իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[8] նախադեպային իրավունքը սահմանում է, որ դա արդարադատության գերակա շահն է, ըստ որի թեև, որպես ընդհանուր կանոն, մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով

[3] https://www.riigiteataja.ee/en/eli/530102013093/consolide
[4] http://www.legislationline.org/documents/section/criminal-codes
[5] https://matsne.gov.ge/ka/document/download/90034/64/en/pdf
[6] http://www.vsrh.hr/CustomPages/Static/HRV/Files/Legislation__Criminal-Procedure-Act.pdf
[7] Այսուհետ՝ Կոնվենցիա
[8] Այսուհետ՝ Եվրոպական դատարան

պաշտպանվելու իրավունքը պետք է հարգել, սակայն ընտրություն կատարելու այդ իրավունքը դատարանի կողմից կարող է անտեսվել կամ ստորադասվել, **եթե դրա համար առկա են վերաբերելի և բավարար հիմքեր՝ պայմանավորված արդարադատության գերակա շահով**:[9]

Մեկ այլ՝ Մայզիթն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը հայտնել է դիրքորոշում առ այն, որ չնայած փաստաբանի և հաճախորդի միջև վստահության վրա հիմնված փոխհարաբերության կարևորությանը, միևնույն ժամանակ հարկ է նշել, որ պաշտպան ընտրելու իրավունքը չի կարող համարվել բացարձակ: Այն ենթակա է որոշակի սահմանափակումների այն դեպքերում, երբ անձին տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն, ինչպես նաև այն դեպքում, երբ դատարանը որոշում է, թե **արդյոք արդարադատության շահը պահանջում է, որ մեղադրյալը ներկայացվի իր կողմից նշանակված պաշտպանի կողմից:** Պաշտպանին նշանակելիս, ազգային դատարանները, անշուշտ, պետք է հաշվի առնեն մեղադրյալի ցանկությունը: Այնուամենայնիվ, այս ցանկությունը կարող է անտեսվել, երբ առկա են համապատասխան և բավարար հիմքեր առ այն, որ այն անհրաժեշտ է արդարադատության շահի համար (տե՛ս Կրոզիսթենն ընդդեմ Գերմանիայի (Croissant v. Germany) 1992 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 13611/88, կետ 29):[10]

Տարասովն ընդդեմ Ուկրաինայի գործի շրջանակներում Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված մեղադրյալի՝ դատավարությանն արդյունավետ մասնակցելու իրավունքը, սկզբունքորեն ներառում է ոչ միայն նիստերին ներկա գտնվելը, այլև՝ դատավարությանը մասնակից լինելը և դրան հետևելը (որն ընդգրկում է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մեղադրյալի՝ իրեն անձամբ պաշտպանելու իրավունքը): Այս առումով **«արդյունավետ մասնակցությունը» ենթադրում է, որ մեղադրյալը ընդհանուր առմամբ հասկանում է դատավարության բնույթը, այդ թվում՝ իր նկատմամբ հնարավոր կիրառվելիք պատժի տեսակը:**

[9] Տե՛ս Մեֆտահն ու այլք ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ) (Meftah and others v. France) 2002 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 32911/96, 35237/97, 34595/97, կետ 45:
[10] Տե՛ս Մայզիթն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia) 2005 թվականի հունվարի 20-ի վճիռը, գանգատ թիվ . 63378/00, կետ 66:

Մեղադրյալը պետք է նաև կարողանա իր փաստաբաններին բացատրել տեղի ունեցած դեպքերի իր տարբերակը, մատնանշել այնպիսի պնդումներ, որոնց հետ ինքը համաձայն չէ և տեղեկացնել այնպիսի փաստերի մասին, որոնք պետք է դրվեն իր պաշտպանության հիմքում: Գործի հանգամանքներից ելնելով՝ պետությունները կարող են ունենալ պոզիտիվ պարտականություն՝ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնց առկայության պարագայում մեղադրյալը դատական լսումներին կունենա արդյունավետ մասնակցություն:[11]

Մեկ այլ՝ Պանովիցն ընդդեմ Կիպրոսի գործով Եվրոպական դատարանը գտել է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքից հրաժարվելը *այնքանով, որքանով դա թույլատրելի է,* չպետք է հակասի հանրային շահին, պետք է լինի միանշանակ և պետք է ուղեկցվի իրավունքից հրաժարվելու կարևորությանը համարժեք *նվազագույն երաշխիքներով:* Ավելին, մեղադրյալը Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված իրավունքներից հրաժարվելու դեպքում պետք է ցույց տա, որ ինքը ողջամտորեն գիտակցում է իրավունքից հրաժարվելու դեպքում առաջանալիք հետևանքները (տե՛ս Թալաթ Թունցն ընդդեմ Թուրքիայի (*Talat Tunç v. Turkey)*, 2007 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 32432/96, կետ 59 և Ջոնսն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Jones v. the United Kingdom* (dec.) 2003 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 30900/02):[12]

Եվրոպական դատարանի վերը նշված նախադեպերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս իրականացնել եզրահանգումներ առ այն, որ պաշտպան ունենալու իրավունքը բացարձակ չէ: Մեղադրյալի կողմից պաշտպանի ընտրություն կատարելու իրավունքը դատարանի կողմից կարող է անտեսվել կամ ստորադասվել, եթե դրա համար առկա են արդարադատության գերակա շահով պայմանավորված վերաբերելի և բավարար հիմքեր: Միևնույն ժամանակ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարումը պետք է արտահայտվի աներկիմաստ՝ ուղեկցվելով դատավարական նվազագույն երաշխիքներով, այդ թվում՝ իրավունքից հրաժարվելու դեպքում մեղադրյալի համար

[11] Տե՛ս Տարասովն ընդդեմ Ուկրաինայի (Tarasov v. Ukraine) 2013 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 17416/03, կետ 98

[12] Տե՛ս Պանովիցն ընդդեմ Կիպրոսի (Panovits v. Cyprus) 2008 թվականի դեկտեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 4268/04, կետ 68:

առաջանալիք հետևանքների գիտակցմամբ: Հարկ է նշել նաև, որ յուրաքանչյուր դեպքում մեղադրյալի արդար դատաքննության իրավունքի իրացման համար պահանջվում է ապահովել վերջինիս դատավարության «արդյունավետ մասնակցությունը»՝ թե՛ պաշտպանի միջոցով, թե՛ անձամբ իր պաշտպանությունն իրականացնելիս:

Հետևաբար, քրեադատավարական օրենսգիրքը պետք է հստակորեն նշի այն սահմաններն, ինչպես նաև չափանիշներն ու չափորոշիչները, որոնց օգնությամբ վարույթ իրականացնող մարմինը հնարավորություն կունենա որոշել, թե արդյոք առկա են վերը նշված «վերաբերելի» ու «բավարար» հիմքերը՝ արդարադատության գերակա շահի առկայությունը հաստատված համարելու համար:

Քանի դեռ Օրենսգիրքը չի սահմանում մեղադրյալի՝ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնարար իրավունքից շեղվելու, նահանջելու նյութահիրավական և վարութային հիմքերը, կշարունակվի պահպանվել իրավական անորոշություն քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության) կիրառության հարցում, երկու մրցակցող ինստիտուտների՝ պարտադիր իրավաբանական ներկայացուցչության ինստիտուտի և իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու հիմնական իրավունքի միջև:

Ավելին, օրենսդրական նշված կարգավորումները վիճահարույց են նաև ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Ըստ այդ հոդվածի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Իրավական որոշակիության սկզբունքին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Ըստ Սահմանադրական դատարանի 2017 թվականի մարտի 14-ի թիվ ՍԴՈ-1357 որոշման՝ սահմանադիրը Սահմանադրության 79-րդ

հոդվածում ամրագրված իրավական որոշակիության սկզբունքը տարածում է հիմնական իրավունքներ և ազատություններ սահմանափակող օրենքների վրա:

Ավելին, ըստ 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՍԴՈ-753 որոշման՝ «իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Եվրոպական դատարանի վճիռներում: Մասնավորապես, Եվրոպական դատարանն ընդգծել է, որ որևէ նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որը թույլ տա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, դրա հետ համատեղելու իր վարքագիծը և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ դրա գործողությունից:[13]

Այսպիսով, խնդրո առարկա կարգավորումների համադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից որոշման կայացման համար օրենքով ամրագրված չեն հստակ և որոշակի չափանիշներ: Այս չափանիշները, մասնավորապես կարևոր են այքանով, որ յուրաքանչյուր դեպքի գնահատման հիմքում կդրվեն և կապահովվեն անձի՝ անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքի և գերակա կամ արդարադատության շահի հավասարակշռությունը:

[13] Տե՛ս Սանդեյ Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության (The Sandy Times v. The United Kingdom) գործով վճիռ, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասով, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

1. Սույն դիմումն ընդունել վարույթ,
2. Որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 72-րդ հոդվածի 2-րդ մասի (երրորդ նախադասության)՝ ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 2-րդ մասի և 79-րդ հոդվածների համապատասխանության հարցն այնքանով, որքանով չի պահպանվում հանցագործության համար մեղադրվող անձի՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքի լիարժեք իրացումը պաշտպանի պարտադիր մասնակցության ինստիտուտի կիրառության շրջանակներում:

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ